ՈՍԱԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման մասին

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ
Կրճատ անվանումը	ԳՊՄԻ
Գործունեության հասցեն	Պ.Սևակ 4, Գյումրի 3126, Հայաստան
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	Չի ունեցել

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ԳՊՄԻ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման ԳՊՄԻ գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ԳՊՄԻ ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

Քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը.

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	27 մայիսի 2015
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝	08 սեպտեմբերի 2015
փորձագիտական այցի իրականացում՝	09-12 նոյեմբերի 2015
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	23 փետրվարի 2016
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	10 մարտի 2016

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով[2]:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԳՊՄԻ-ին իր առաքելությունն է համարում պատրաստել ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետներ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման միջոցով: Գիտակցելով իր դերակատարությունը տարածաշրջանի գիտակրթական, մարզամշակութային և սոցիալ-տնտեսական ոլորտներում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում, ԳՊՄԻ նպատակ է դրել դառնալ Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի համար յուրատեսակ «համայնքային կենտրոն»:

Փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, այնուամենայնիվ ներկա դրությամբ բուհի անվան, կանոնադրության և առաքելության միջև առկա են տարբերություններ և հակասություններ, որոնք էլ ռիսկային են դարձնում բուհի զարգացման գործընթացը: Բուհի անվանումը և ներկայիս կանոնադրությունը չեն արտացոլում բուհի գործունեության ամբողջական շրջանակը (ոչ մանկավարժական ծրագրերի առկայությունը), ինչն էապես նվազեցնում է բուհի ճանաչելիությունը: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ տարածաշրջանային համալսարան դառնալու ռազմավարություն որդեգրած բուհը նպատակ ունի փոփոխել գործող կանոնադրությունը՝ առաքելությանը առավել համապատասխանեցնելու համար:

ԳՊՄԻ-ի 6 ֆակուլտետներում իրականացվում է բակալավրի 31 առկա, 29 հեռակա, մագիստրոսի 18 առկա և հետազոտողի 4 գիտական ուղղություններով 20 հետազոտական կրթական ծրագրեր: ՄՈՒՀ-ի մասնագիտական մանկավարժական և ոչ մանկավարժական մասնագիտության կրթական ծրագրերն ընդհանուր առմամբ համահունչ են հաստատության առաքելությանը, սակայն առկա են որոշ ծրագրեր, որոնք չեն համապատասխանում ՌԾ-ում նկարագրված առաքելությանը: Խոսքը վերաբերում է այն մասնագիտություններին, որոնք ներկայումս այդքան էլ պահանջված չեն ՀՀ աշխատաշուկայում, և, հետևապես, այդ մասնագիտությունների գծով ձևավորվում են փոքրաթիվ խմբեր, հաճախ մեկ-երկու ուսանողից բաղկացած: Հեռակա ուսուցման ձևում կրթական ծրագրերի իրականացումը կապված է մի շարք բավականին լուրջ խնդիրների հետ, մասնավորապես՝ շեշտվել է դասաժամերի ոչ բավարար լինելը, որը հանգեցնում է կրթական ծրագրերի ոչ արդյունավետ իրականացմանը: Գործող գնահատման կարգի կիրառման արդյունավետությունը և օբյեկտիվությունը ցածր է, հատկապես հեռակա ուսուցման համակարգում, որտեղ նկատելի է անհամեմատ ցածր առաջադիմություն:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ բուհում մշակվել են կրթական ծրագրերն իրականացնելու համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Այդ կանոնակարգը, որը շատ պաշտոնների

---

[1] Հավելված 1 ՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

[2] Հավելված 2՝ Ամփոփ գնահատում

տեղակալման համար ենթադրում է մրցակցային ընտրություն, նպաստում է, որ բուհն ունենա առավել արհեստավարժ աշխատակիցներ: Վերջինիս նպաստում է նաև վերջին տարիներին բուհում նկատվող գիտական կոչումներով և աստիճաններով աշխատակիցների թվի աճը: Այն փաստը, որ բուհի դասախոսական անձնակազմի գերակշռող մասը հիմնական աշխատողներ են, էապես բարձրացնում է ՊԴ կազմի կայունությունը և նպաստում կայուն կրթական գործառույթների իրականացմանը: Դրական միտում է նաև այն, որ բուհը փորձում է իր աշխատակիցների պահանջարկը լրացնել իր նախկին շրջանավարտ հանդիսացող մագիստրոսներով ու հետազոտողներով: Չնայած բուհում առկա ՊԴ կազմի խրախուսման որոշ մեխանիզմների առկայությանը՝ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ վերջին 3 տարիներին բուհում երիտասարդ դասախոսների թվի նվազում է նկատվում (19-ից 16%), ինչը խոցելի է սերնդափոխությունն ապահովելու տեսակետից:

ԳՊՄԻ ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ներկայումս բավարարում են մասնագիտական կրթության տրամադրման համար: Փորձագիտական խումբը, այնուամենայնիվ, գտնում է, որ անհրաժեշտություն կա ռեսուրսների բարելավման և հարստացման: ՄՈՒՀ-ում դասընթացները կազմակերպվում են 2 հերթափոխով: Փորձագիտական խումբը նշում է, որ նման դեպքերում կդժվարանա թե՛ ուսանողների սովորելու գործընթացը, թե՛ աշխատակիցների գործունեությունը: Չնայած առկա կրթական ռեսուրսներին (լաբորատորիաներ, համակարգիչներ, պրոյեկտորներ և այլն), այնուամենայնիվ նկատվում է տեխնիկական միջոցների և լաբորատորիաների նորացման և վերահագեցման անհրաժեշտություն, ինչի մասին փաստեցին նաև փորձագիտական խմբի հետ հանդիպման մասնակիցները: Բուհի ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը ուսանողական վարձավճարներն են, ինչը ուսանողների թվաքանակի նվազման պայմաններում վտանգում է բուհի ֆինանսական կայունությունը: Ֆինանսավորման այլընտրանքային աղբյուր են դրամաշնորհային ծրագրերը, որոնք համալրում են բուհի ֆինանսական միջոցների ընդհամենը 1%-ը:

Բուհում առկա ուսանողների հավաքագրման ընթացակարգերը հստակ են և կատարվում են ԿԳՆ կողմից հաստատված կանոնակարգերի համաձայն բուհի կողմից կազմակերպված ապագա դիմորդների հետ իրականացվող միջոցառումներով, որոնք նպաստում են հավաքագրման գործառույթներին: Բուհի կողմից կատարվել են ուսումնասիրություններ և մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ պոտենցիալ դիմորդների շրջանում՝ հարցումների, այցերի և քննարկումների ձևաչափով, որը, փորձագիտական խմբի կարծիքով, դրական ազդեցություն կարող է թողնել դիմորդների հավաքագրման վրա:

Փորձագիտական խմբի կարծիքով, ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները և գործիքները (հարցաթերթիկները) բավարար չափով ամբողջական և վստահելի չեն: Մանավանդ խոցելի է ուսանողների մի ստվար զանգվածի՝ հեռակա ուսուցման համակարգում ուսանողների կարիքների ուսումնասիրության ցածր աստիճանը, ինչը խոչնդոտում է նրանց կրթության արդյունավետության բարձրացմանը: Բուհում գործում են մարմիններ, որոնք փորձում են օժանդակել ուսանողներին և նպաստել նրանց կրթական կարիքների վերհանմանն ու լուծմանը: Ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու լրացուցիչ պարապմունքների և ստանալու խորհրդատվություններ:

ՄՈՒՀ-ը չունի հետազոտական ոլորտի և հետաքրքրությունների հստակ ռազմավարության, ինչը թուլացնում է հետազոտական գործունեությունը: Խոչնդոտող հանգամանք է նաև այդ ուղղությամբ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի բացակայությունը, որոնք նախատեսվում են ներդնել 2017 թվականից սկսած: Բուհը անելիքներ ունի հետազոտական աշխատանքների միջազգայնացման առումով, քանի որ փաստացի կարելի է եզրակացնել, որ միջազգային որևէ նշանակալի հետազոտական գործունեություն չի իրականացվում բուհում, բացառությամբ միջազգային ամսագրերում հոդվածների տպագրման: Սա նվազեցնում է ՊԴ անձնակազմի շարժունությանը, փոքրացնում է արտերկրյա բուհերի հետ համագործակցության շրջանակը:

ԲՈՒՀ-ի ռազմավարական ծրագրում ամրագրված է միջազգայնացման և արտաքին կապերի հիմնական ուղղությունները և խնդիրները: Բուհն իր առաջ նպատակ է դրել ապահովել արտաքին կապերի համակողմանի զարգացում, փորձի փոխանակում և ինստիտուտի միջազգայնացմանը նպաստող գործունեություն:

ԲՈՒՀ-ն ունի միջազգայնացման որոշակի փորձ միջազգային ծրագրերի շրջանակում և այսօր նույնպես ընդրկված է մի շարք ծրագրերում, ներառյալ ՏԵՄՊՈՒՍ ծրագրերը (ARARAT, HEN-GEAR, SuToMa, ARMENQA և այլն): Չնայած դասախոսների մեծամասնությունը տիրապետում է որևէ օտար լեզվի, որը կարող է բավարար լինել ընդհանուր հաղորդակցման համար, այնուամենայնիվ սա անբավարար է մասնագիտական հաղորդակցման և օտար լեզվով մասնագիտական դասընթացների անցկացման համար, որոնց կազմակերպումն անհրաժեշտ է ուսանողների փոխանակման ծրագրերի տեսակետից: Օտար լեզվի ամրապնդման նպատակով բուհը կազմակերպում է դասախոսների վերապատրաստում անգլերենից: Բուհում գործում է նաև լեզվի կենտրոն, որտեղ ուսանողները կարող են մասնակցել օտար լեզվի դասընթացների:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ հատկապես վերջին տարիների ընթացքում բուհի կառավարման համակարգում կատարվել են որոշ բարեփոխումներ (ՈԱԿ, բուհ-գործատու համագործակցության կենտրոն և այլն), որոնք միտված են կրթության որակի բարելավմանը, սակայն բուհի կազմակերպական կառուցվածքը դեռևս ամբողջովին հարմարեցված չէ բուհի առաքելության և ռազմավարական խնդիրների իրականացմանը, առկա է կառավարչական ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդիր և վարչարարությունն ընդհանուր առմամբ չի իրականացվում որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով: Չնայած այն բանին, որ գործում են բուհերին բնորոշ հիմնական ստորաբաժանումները, գիտական ստորաբաժանման բացակայությունը բուհի առաքելության ամբողջական իրականացման համար ռիսկային է:

Վերջին տարիների ընթացքում բուհի որակի ապահովման համակարգի ներդրումն ու զարգացումը նպաստավոր պայմաններ կարող են ստեղծել որակի մշակույթի ձևավորման, արտաքին ու ներքին գնահատումների համար: Բուհում գործող որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված կանոնակարգերը հիմք են հանդիսանում որակի ապահովման գործառույթների իրականացման համար: Բուհի դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին ապահովում է առավել հասցեական և արդյունավետ գործունեություն, սակայն նրանց ակտիվության աստիճանը դեռևս ցածր է: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին գործող համակարգ, որը դեռևս գտնվում է զարգացման փուլում՝ նպաստելով հաստատության գործունեության շարունակական բարելավմանը, որակի մշակույթի ձևավորմանը և ձգտում է ապահովել իր գործունեության թափանցիկությունը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ԳՊՄԻ-ն ունի կարևոր կրթական և սոցիալական դեր, ինչպես նաև լուծում է տարածաշրջանային խնդիր՝ հատկապես մանկավարժական կադրերով ապահովելու տեսանկյունից:
2. ԳՊՄԻ-ն ունի անհրաժեշտ որակավորում ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, ինչպես նաև պարբերաբար գնահատումների միջոցով վեր է հանում նրանց կարիքները:
3. ՄՈՒՀ-ն ունի կրթական գործընթացի իրականացմանն օժանդակող անհրաժեշտ ռեսուրսներ:
4. ՄՈՒՀ-ում առկա է հաշվետվողականության համակարգ, որը վեր է հանում բուհում իրականացվող գործընթացները:
5. ՄՈՒՀ-ն ունի միջազգային ծրագրերի մասնակցության փորձ, որը նպաստում է ՄՈՒՀ-ի արտաքին կապերի ամրապնդմանը:
6. ՄՈՒՀ-ում առկա է որակի ներքին ապահովման համակարգ, որը նպաստում է որակի մշակույթի ձևավորմանը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ԳՊՄԻ ՌԾ-ն հիմնված չէ ներքին և արտաքին միջավայրերի հստակ վերլուծությունների վրա:
2. ԳՊՄԻ-ի կազմակերպական կառուցվածքը հարմարեցված չէ ռազմավարական նպատակների իրականացմանը, առկա է կառավարչական ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդիր:
3. Որոշ ՄԿԾ-ներ չեն համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին, իսկ բարելավված ՄԿԾ-ները դեռևս հետևողականորեն չեն իրականացվում:
4. Հեռակա ուսուցման համակարգում առկա են ՄԿԾ-ների իրականացման խնդիրներ՝ կապված ուսումնական գործընթացի կազմակերպման և գնահատման համակարգի արդյունավետության հետ:
5. ՄՈՒՀ-ում առկա չէ հետազոտական գործունեության զարգացմանն ուղղված քաղաքականություն, ինչպես նաև հստակեցված չեն ՄՈՒՀ-ի գիտահետազոտական ուղղությունները:
6. Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար առկա չեն անհրաժեշտ պայմաններ:
7. ՄՈՒՀ-ում մշակվող հաշվետվությունները հիմնականում ունեն տեղեկատվական բնույթ, և քիչ են վերլուծությունները:
8. ՄՈՒՀ-ում օտար լեզուների իմացության մակարդակը բարձր չէ:
9. ՄՈՒՀ-ում առկա գործընթացների մեծ մասը գտնվում է պլանավորման և իրականացման փուլում, փակված չէ ՊԻԳԲ շրջափուլը:

Համալսարանին առաջարկվում է.

Առաքելություն և նպատակներ

1) Հստակեցնել բուհի առաքելությունը, վերջինիս մեջ արտացոլելով բուհի առանձնահատկությունը, ուժեղ կողմերը և շահակիցների՝ մասնավորապես անձնակազմի, շրջանավարտների, ուսանողների, ինչպես նաև տարածաշրջանի բնակչության կարիքները:
2) Հստակեցնել և իրար համապատասխանեցնել բուհի առաքելությունը, անվանումը, կանոնադրությունն ու իրական գործունեությունը:
3) Մշակել և կյանքի կոչել ռազմավարական նպատակների իրականացման որակական և քանակական գնահատման, ինչպես նաև ռազմավարական ծրագրի բարելավման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր:
4) ՌԾ իրականացման գործընթացում ապահովել շահակիցների (հատկապես արտաքին) ակտիվ ընդգրկվածությունը և հետադարձ կապը:

Կառավարում և վարչարարություն

5) Բարեփոխել բուհի կազմակերպական կառուցվածքը, այն հարմարեցնելով բուհի ռազմավարական խնդիրների իրականացմանը:
6) Մշակել և կիրառել էթիկայի առանձին կանոնակարգ:
7) Խթանել արտաքին շահակիցների ներգրավվածությունը կառավարման գործընթացներում:
8) Ռիսկերի կառավարման նպատակով ստեղծել համապատասխան աշխատանքային խումբ, որը պարբերաբար զեկույցներ կներկայացնի ՌԾ իրականացման վերաբերյալ:
9) Մշակել կառավարման գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և դրանց կիրառումը գնահատող նոր կառուցակարգեր:

Մասնագիտության կրթական ծրագրեր

10) Բարելավել մասնագիտական կրթական ծրագրերի ցանկը՝ այն համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին:

11) Մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությանը և արդիականացմանը միտված քաղաքականություն և ընթացակարգեր:
12) ՄԿԾ-ներում արտացոլել և ապահովել ուսումնառության և դասավանդման մեթոդների ու գնահատման ձևերի կապը վերջնարդյունքների հետ:
13) Բարեփոխել հեռակա ուսուցման համակարգում կրթական ծրագրերի իրականացման գործընթացը, մշակելով առավել արդյունավետ ուսումնական պլաններ:
14) Մշակել և իրականացնել գրագողության դեմ պայքարի և ակադեմիական ազնվության քաղաքականություն:
15) Մշակել դասընթացների կրեդիտների հաշվարկման հիմնավորված մոտեցումներ, կրեդիտների բաշխումը համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին:
16) Մշակել ՄԿԾ-ների մշտադիտարկման ֆորմալ գործընթաց:

Ուսանողներ

17) Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և ուսումնասիրել դրանց արդյունավետությունը:
18) Զարգացնել ուսանողների հետազոտական գործունեությունը և ուժեղացնել հետազոտություն-ուսումնառություն կապը:
19) Բարեփոխել բուհ-գործատու համագործակցության կենտրոնի գործառույթները՝ դրանք նպատակաուղղելով ուսանողներին և շրջանավարտների կարիերայի օժանդակմանը:
20) Մշակել վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ:
21) Խթանել ուսանողների կողմից խնդիրների վերհանման նախաձեռնողականությունը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

22) Մշակել դասախոսներին ներկայացվող մասնագիտական պահանջներ ըստ համապատասխան ՄԿԾ-ների:
23) Մշակել և ներդնել դասախոսների մասնագիտական վերապատրաստումների համակարգ:
24) Մշակել մեխանիզմներ, որոնց միջոցով կխթանվի երիտասարդ դասախոսներով բուհի համալրումը:
25) Մշակել և ներդնել պաշտոնների անձնագրեր ՊԴ և ուսումնաօժանդակ անձնակազմի համար:
26) Գնահատել ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից կատարվող աշխատանքի արդյունավետությունը և մշակել մեխանիզմներ՝ այն խթանելու ուղղությամբ:

Հետազոտություն և զարգացում

27) Մշակել բուհի հետազոտական գործունեության հստակ ուղղություններ, հաշվի առնելով ամբիոններում կուտակված գիտական փորձը և առկա ռեսուրսները:
28) Խթանել միջազգային մակարդակով հետազոտական գործունեությունը:
29) Բակալավրական կրթական ծրագրերում ներդրնել հետազոտական բաղադրիչ և նպաստել դրա կայացմանը:
30) Նպաստել ՀՀ այլ բուհերի և գիտական կենտրոնների հետ գիտական գործունեության զարգացմանը՝ համատեղ գիտական թեմաների իրականացման և դրսից հրավիրված մասնագետների կողմից կազմակերպված պրոբլեմային թեմաներով սեմինարների անցկացման /հատկապես մագիստրատուրայում/ և այլ միջոցներով:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

31) Ֆինանսական անկախության և կայունության նպատակով ապահովել ֆինանսավորման արտաքին աղբյուրների բազմազանությունը, ընդլայնել դրամաշնորհային ծրագրերի քանակը:

32) Բուհի ֆինանսական պլանավորումն ու բաշխումն իրականացնել հաշվի առնելով ՄԿԾ-ների պահանջները:
33) Բարելավել գրադարանային ենթակառուցվածքները՝ զարգացնելով նոր տեխնոլոգիաների կիրառումը:
34) Զարգացնել ՏՏ ծառայությունների շրջանակը, որը կաջակցի բուհի կառավարման համակարգին, հեռավար ուսուցման ներդրմանը և այլ ոլորտներն:
35) Ստեղծել համապատասխան պայմաններ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար կրթական միջավայրը հասանելի դարձնելու նպատակով:

Հասարակական պատասխանատվություն

36) Բուհի ներքին հաշվետվողականության համակարգում զարգացնել վերլուծական բաղադրիչը:
37) Հստակեցնել և զարգացնել հասարակության հետ հետադարձ կապերի մեխանիզմները:
38) Մշակել և ներդնել հասարակությանը մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ:

Արտաքին կապեր և միջազգայնացում

39) Քայլեր ձեռնարկել սեփական նախաձեռնությամբ և ներդրումներով իրականացվող միջազգային ծրագրերի ներդրման ուղղությամբ:
40) Ներքին շահակիցների շրջանում խթանել օտար լեզուների իմացության մակարդակը՝ արտաքին համագործակցության և օտարալեզու կրթական ծրագրերի ներդրման նպատակներով:
41) Ակտիվացնել համագործակցությունը ՀՀ բուհերի և տարբեր գիտական կենտրոնների հետ:

Որակի ներքին ապահովում

42) Մշակել և կիրարկել ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների մասնակցությունը խրախուսող քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ:
43) Մշակել ՈԱ համակարգի գործունեության մշտադիտարկման և վերլուծության մեխանիզմներ և ապահովել ՈԱ պատասխանատուների մասնագիտական զարգացման շարունակականությունը:
44) Բարելավել բուհում իրականացվող հարցումների և տվյալների հավաքագրման գործընթացը՝ ներդնելով դրանց իրականացման հավաստիության մեխանիզմներ:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Ինստիտուտի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու հավակնության տեսակետից ներկայացվում են հետևյալ դիտարկումներն ու խորհրդատվությունը:

ԳՊՄԻ-ի ուժեղ կողմերը

ԳՊՄԻ-ն փաստացի տարածաշրջանային համալսարան է, որի առջև ծառացած են տեղական տնտեսության և բնակչության անկման խնդիրները, որն իր հետևանքն է ունեցել նաև ուսանողների ընդունելության և ռեսուրսներով ապահովվածության վրա: Ի հեճուկս այս մարտահրավերների, ինստիտուտը որոշ ձեռքբերումներ է գրանցել. օրինակ՝ շինության վերանորոգում, միջազգային ծրագրերում ներգրավվածություն, ինչպես նաև ուսանողների և անձնակազմի խրախուսում՝ հոդվածներ տպագրել արտաքին գրախոսություն ունեցող ամսագրերում: Ինստիտուտը տեղական բարձր համբավ ունի՝ հատկապես մանկավարժության ուղղությամբ: Դասավանդումը լավ հիմքերի

վրա է դրված, և արդեն ուսանողների հաջողությունները չափվում են նախանշված վերջնարդյունքների ձեռքբերման տեսանկյունից:

Ձեռնարկվելիք գործողություններ՝ եվրոպական չափանիշներին համապատասխանելու համար

Միջազգային բենչմարքինգի վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալը՝ շեղագիր խորհրդատվություններով:

1. **Ուսանող-դասախոս համամասնությունը և դասավանդման ռեսուրսների կառավարումը**

Ներկայումս դասախոս-ուսանող հարաբերակցությունը 1/9 է, որն ըստ եվրոպական չափանիշների, բավական բարձր ցուցանիշ է, ինչը հանգեցնում է դասախոսների մեծ թվաքանակի: Վերոգրյալից զատ, որոշ մասնագիտությունների գծով ուսանողների թվաքանակը բավական սակավ է, ինչը հանգեցնում է ռեսուրսների վատնման: Նմանօրինակ ծրագրերի գծով ցուցաբերվող աջակցությունը կարծես առավել միտված է դասախոսներին, քան թե տեղական տնտեսությանը կամ ուսանողներին: Անձնակազմի ուղղությամբ չափից ավել ներդրումները հնարավորություն չեն ընձեռում, որպեսզի համապատասխան ներդրումներ արվեն այլ կարևոր ոլորտներում՝ ինչպես օրինակ էլեկտրոնային գրադարանը:

Ռեսուրսները պետք է ուղղորդվեն դեպի այն ծրագրերը, որոնք ուսանողներ են գրավում և հստակ ու թափանցիկ ձևով համապատասխանում են տարածաշրջանային տնտեսության պահանջներին:

2. **Ինստիտուտի ռազմավարական կառավարում**

ԳՊՄԻ-ի ռազմավարական պլանավորումը նախնական փուլում է և հագեցած չէ ներքին և արտաքին միջավայրերի վերլուծական հստակ տվյալներով: Արտաքին շահակիցների տեսակետները ևս արտացոլված չեն: Ծրագիրը լայն տարածում չի ստացել: Ծրագրում զետեղված նպատակները պետք է SMART լինեն (Specific /յուրահատուկ/, Measureable /չափելի/, Realistic /իրատեսական/, Timely /ժամանային արտահատմամբ/):

ՌԾ-ն պետք է առավել ուժեղացվի տվյալների հավաքագրմամբ, ինչպես նաև կատարողականի մշտադիտարկման առավել լայն կիրառմամբ և ամբիոնների ու դեկանատների մակարդակում կառավարմամբ: Տեղական համայնքը պետք է ներգրավված և տեղեկացված լինի ՌԾ առաջընթացի վերաբերյալ:

3. **Հետազոտություն**

Ինստիտուտի առանձին աշխատակիցների նախաձեռնությամբ իրականացվող հետազոտությունների արդյունքը միջազգային նորմերի հետ համեմատ ցածր է և կարող է բարելավվել՝ չնայած այն հանգամանքին, որ ներկայումս ևս արտաքին գրախոսություն ունեցող ամսագրերում տպագրությունները խրախուսվում են:

Հետազոտական թիրախային ֆոնդերը կարելի է առավել արդյունավետ օգտագործել՝ խթանելու հետազոտությունը և գիտելիքի ստեղծումը ի բարօրություն տեղական համայնքի: Սա կարելի է իրականացել, օրինակ, նախագծերի համատեղ ֆինանսավորման, կոնֆերանսներին և սեմինարներին մասնակցության առավել աջակցման, ինչպես նաև հետազոտական ֆինանսավորման տենդերների պատրաստման միջոցով: Հաստատության ծախսերի առավել մեծ չափաբաժին կարելի է հատկացնել վերագրյալի իրականացմանը:

4. **Մասնագիտության կրթական ծրագրեր**

ՄԿԾ-ում առկա են ակնառու թերացումներ, ինչպես, օրինակ, ընդհանուր ըմբռնում չկա առարկաների կրեդիտային հատկացումները լսարանային ժամաքանակից ելնելով, հակագրագողության քաղաքականության ներդրման ձախողումը, գնահատման համակարգի ոչ

համակարգված լինելը, տվյալների արդյունավետ հավաքագրման բացակայությունը, ինչպես նաև ծրագրերի արտաքին վերանայման սահմանափակ քանակը: Վերոգյալից պարզ է, որ

ԳՊՄԻ-ը դեռ շատ անելիքներ ունի մինչ կկարողանա ԵԲԿՏ-ի մաս կազմել: ԳՊՄԻ-ը պետք է.

ա. ապահովի, որպեսզի դասընթացներին կրեդիտներ հատկացվեն հետևողական կերպով, ինչը կնպաստի համալսարանների միջև կրեդիտների փոխանցմանը,

բ. համապատասխան նյութեր տպագրի և տեղեկատվություն փոխանցի անձնակազմին՝ գրագողության եվրոպական սահմանումների վերաբերյալ և հետևողական լինի համապատասխան քաղաքականության ներդրման ուղղությամբ. օր.՝ գրագողության դեմ պայքարի առցանց ծրագրային ապահովման /software/ օգտագործման միջոցով,

գ. քայլեր ձեռնարկի ուսանողների գնահատման համակարգի վերաբերյալ փորձագիտական խմբի դիտարկումների ներդրման ուղղությամբ՝ հատկապես շեշտադրելով հանձնարարություններին ներկայացվող պահանջները և գնահատման չափանիշները,

դ. ապահովի ուսանողների առաջադիմության վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ կիրառելով հավաքագրման վերաբերյալ արտաքին և ներքին բենչմարքինգի արդյունքները,

ե. քայլեր ձեռնարկի ծրագրերի պարբերական վերանայման ուղղությամբ՝ ներառելով արտաքին գնահատողներ:

5. Լեզվական քաղաքականություն

Չնայած գրադարանային պահուստի 30% ռուսալեզու գրականություն է և որոշ ուղղությունների գծով ռուսերեն գրականությունը գերակայում է, ԳՊՄԻ-ի նոր դիմորդները ռուսերենի համապատասխան մակարդակ չունեն:

ԳՊՄԻ-ը պետք է սահմանազատի ընդունելության մակարդակում լեզվական պահանջներին ներկայացվող երկարաժամկետ քաղաքականությունը, ինչպես նաև իր ուսանողներին մատուցվող լեզվական աջակցությունը: Սա պետք է համակցվի գրադարանային ռեսուրսների ձեռքբերման համապատասխան ռազմավարությամբ, ինչը հնարավորություն կընձեռի բոլոր ուսանողներին ձեռք բերել գրականություն այն լեզվով, որով իրենք ի վիճակի են հասկանալ:

ԳՊՄԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2016թ. փետրվարի 4-ին ԳՊՄԻ-ին ՈԱԱԿ է ներկայացրել իր դիտողություններն ու առաջարկությունները փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ: 2016թ. փետրվարի 15-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի դիտողությունները և մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը որոշակի փոփոխություններ է կատարել զեկույցի վերջնական տարբերակի ձևակերպումներում, սակայն հավատարմագրման չափանիշների գնահատման արդյունքները փոփոխման չեն երթարկվել: Վերջնական զեկույցի տեքստում խմբի կողմից կատարված փոփոխությունների վերաբերյալ նշումներ են կատարված համապատասխան էջերի տողատակերում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

ԳՊՄԻ-ին ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են, և ներկայացրել է փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Գործողությունների ծրագիր և Ժամանակացույց:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով վերջնական զեկույցում ներկայացված խորհրդատվությունների հիման վրա կազմված ԳՊՄԻ ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման գործողությունների ծրագիրը, **եզրակացնում է.**

- Բոլոր տասն ուղղությունների համար սահմանված ռազմավարությունների արդյունավետ իրականացման նպատակով կազմվել է գործողությունների ծրագիր:
- Գործողությունների հաջորդականությունը հիմնականում տրամաբանական է, բացառությամբ որոշ դեպքերի:
- Պլանում նշված են գործողությունների իրականացման համար պատասխանատու անձիք:
- Նշված խնդիրների մեծ մասի լուծման համար տրամադրված են համապատասխան ռեսուրսներ, սակայն որոշ դեպքերում բացակայում են ինչպես նյութական, այնպես էլ ֆինանսական ռեսուսրները:
- Գործողությունների իրականացման համար նախանշված ժամանակահատվածները հիմնականում իրատեսական են, բացառությամբ որոշ դեպքերի:
- Քայլերի վերջնարդյունքներն ուղղված են գործողությունների նպատակների իրականացմանը:
- Գործողությունները գնահատելու համար առկա են իրականացման չափման ցուցիչներ, սակայն ազդեցության ցուցիչները գերազանցապես բացակայում են:

Ըստ հավատարմագրման առանձին չափանիշների թերությունների վերացման ԳՊՄԻ գործողությունների ծրագրի պատկերը հետևյալն է.

1. Առաքելություն և նպատակներ: ԲՈՒՀ-ը Առաքելություն և նպատակներ չափանիշի շրջանակներում նախատեսում է որոշակի գործողությունների շարք, համաձայն որի պլանավորվում է հստակեցնել բուհի առաքելությունը և կանոնադրությունը, մշակել ՌԾ իրականացման գնահատման, մշտադիտարկման և բարելավման մեխանիզմներ՝ ապահովելով ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՌԾ-ի իրականացման գործընթացներում: Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով բարելավումների մշակված ծրագիրը՝ հարկ է նշել, որ ԲՈՒՀ-ի առաքելության հստակեցման նպատակով ակնկալվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշում, վերջինս նշված է որպես վերջնարդյունքի գնահատման ցուցիչ, սակայն քանի որ դա ԲՈՒՀ-ի գործառույթ չէ, քայլի իրականացումը որոշակի ռիսկ է պարունակում:

2. Կառավարում և վարչարարություն: ԲՈՒՀ-ը, հիմք ընդունելով փորձագիտական խմբի գնահատականները և համապատասխան խորհրդատվությունները, մշակել է որոշակի քայլեր՝ բարեփոխելու ԲՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը վերջինս ռազմավարական խնդիրներին հարմարեցնելու նպատակով: Խնդիր է դրվել մշակել էթիկայի առանձին կանոնակարգ: Հատուկ ուշադրություն է դարձվում կառավարման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության և ներքին շահակիցների գործունեության ակտիվացման խթանմանը: Ռիսկերի կառավարման նպատակով պլանավորված է մշակել հաշվետվողականության, ինչպես նաև կառավարման գործընթացների արդյունավետության գնահատման համակարգեր: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ էթիկայի կանոնագրքի մշակումը և կիրառումը կարող է դիտվել որպես մեկ ընդհանուր քայլ: Մշակված կանոնագիրքը արդեն իսկ պետք է ներառի արդյունավետ կիրառման մեխանիզմներ: Կանոնագրքի կիրառումը որոշակի ժամկետներ չի կարող ենթադրել, քանի որ այդ գործընթացը շարունակական է: Գիտության և հետազոտության ու մարդկային ռեսուրսների

կառավարման բաժինների ստեղծման նպատակով տրամադրված չեն համապատասխան ֆինանսական ռեսուրսներ, որը ռիսկային է դարձնում այդ քայլերի իրականացումը:

3. Մասնագիտության կրթական ծրագրեր: Չափանիշի շրջանակներում առկա խնդիրների լուծման նպատակով ԲՈՒՀ-ը ներկայացրել է պլանավորված քայլեր, որոնք միտված են նախ և առաջ ՄԿԾ-ների բարելավմանը, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման ձևերի ընտրության և արդիականացման քաղաքականությանը: Նախատեսվում է համապատասխան ընթացակարգի մշակում: Պլանավորված է կրեդիտների հաշվարկման մեխանիզմների բարելավումը: Բարելավման ծրագրում հատուկ ուշադրություն է դարձված հեռակա ուսուցման համակարգին, որտեղ առկա խնդիրները առավել ընդգծված են: Այստեղ պլանավորված են ինչպես ուսումնական պլանների և գործող կարգերի բարելավում, այնպես էլ այդ ուսումնական պլանների հաջող իրականացման համար հեռահար կրթական համակարգերի (E-learning դասընթացներ) ներդրում: Բարելավման պլանում իր տեղն է գտել նաև ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացման խնդիրը: Կարևորվում են նաև ՄԿԾ-ների մշտադիտարկման, գնահատման, բարելավման արդյունավետ մեխանիզմները:

Վերոնշյալ մի շարք քայլերի իրականացման համար որպես ռեսուրս, որակի ապահովման կենտրոնը չի նախատեսվում: Վերջինիս ներառումը առավել հուսալի կդարձներ պլանավորված քայլերի արդյունավետությունը: Հատկապես խոսքը գնում է դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման ձևերի ընտրության և արդիականացման քաղաքականության և ընթացակարգի մշակման մասին: Հեռակա ուսուցման համակարգում ուսումնական պլաններում միայն լսարանային ծանրաբեռնվածության վերանայումը բավարար չի կարող լինել ուսումնական պլանների որակական նշանակալի փոփոխության համար: Մյուս կողմից հեռակա ուսումնական պլաններում լսարանային ժամերը չեն կարող գերազանցել համապատասխան նորմերը: Այստեղ, բարեփոխումների թիրախ կարող են հանդիսանալ նաև հեռակա համակարգում ուսուցման մեթոդները:

4. Ուսանողներ: Բուհը, տվյալ տիրույթում, պլանավորում է բարելավել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները, զարգացնել ուսանողների հետազոտական գործունեությունը, օժանդակել ուսանողների և շրջանավարտների կարիերային, մշակել վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ, ինչպես նաև խթանել ուսանողների կողմից խնդիրների վերհանումը: Նախատեսում է բարձրացնել Բուհ-գործատու համագործակցության կենտրոնի գործունեության արդյունավետությունն ու այն ամբողջովին ինտեգրել բուհի կրթական գործընթացներում: Փորձագիտական խումբը կարևոր է համարում բուհի՝ հետազոտական աշխատանքներում և միջազգային գիտաժողովներում ուսանողների ներգրավվածության բարձրացմանը միտված քայլերը, սակայն հստակ չեն այն մեխանիզմները, որոնցով բուհը ցանկանում է հասնել այդ նպատակներին: Գտնում ենք, որ մեկ եռամսյակն անբավարար է հատկապես աշխատանքի տոնավաճառների կազմակերպման ու մասնակցելու համար:

5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: Բուհը՝ վերլուծելով չափանիշին առնչվող խորհրդա¬տվությունները, նախատեսում է վերանայել և ներդնել ՊԴ կազմի ընտրության, գնահատման, մասնագիտական վերապատրաստման, ինչպես նաև երիտասարդ մասնագետների ներգրավվածության խթանման քաղաքականությունը: Նախանշված բոլոր քայլերի իրականացման դեպքում հնարավոր է որոշակի հաջողությունների արձանագրում: Պետք է նշել, որ որոշ վերջնարդյունքների հասանելիության ժամկետները (օրինակ՝ պաշտոնի անձնագրին համապատասխան ՊԴ կամ ՌՈԱ ունենալ) իրատեսական չեն, ինչպես նաև շատ տեղերում բացակայում են հատկապես ազդեցության ցուցիչները կամ անբավարար են ներկայացված քայլերի համար պատասխանատուներն ու ռեսուրսները:

6. Հետազոտություն և զարգացում: Փորձագիտական խմբի եզրակացության մեջ կարևորվել է ԲՈՒՀ-ում գիտահետազոտական գործունեության բարելավման գործընթացը: ԲՈՒՀ-ը, հիմք ընդունելով փորձագիտական խմբի խորհրդատվությունը և ունենալով որոշակի գիտական ներուժ, մշակել է որոշակի քայլեր այս չափանիշի շրջանակներում առկա խնդիրների լուծման համար:

Նախնառաջ, կարեվորվել է բուհի հետազոտական գործունեության հստակ ուղղությունների մշակումը, որը կհանգեցնի ոլորտի զարգացման ուղենիշների բացահայտմանը: Պլանավորվում է խթանել գիտական գործունեության միջազգայնացումը, բալկալավրիական համակարգում ներդրումը հետազոտական բաղադրիչ և ուժեղացնել գիտական համագործակցությունը ՀՀ այլ բուհերի և գիտական կենտրոնների հետ, սակայն հստակ ընդգծված չեն այն ֆինանսական և նյութական ռեսուրսները, որոնց միջոցով ԲՈՒՀ-ը պլանավորում է դա իրականացնել: ԲՈՒՀ-ում միջազգային հետազոտությունների աշխուժացման գործընթացի շրջանակներում առաջարկվում են մշակել մեխանիզմներ: Վերջիններիս համար նախատեսված է մեկ տարի ժամանակահատված, սակայն գործընթացը անհրաժեշտ էր առավել մանրամասն քայլերով ներկայացնել և պարզաբանել: Այս առումով, այն կարելի է ռիսկային համարել:

7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ: Չնայած առկա կրթական ռեսուրսներին, բուհը փորձում է ավելի հագեցնել և բարեփոխել ուսումնական միջավայրը և այն ավելի համապատասխանացնել ՄԿԾ-ներից բխող վերջնարդյունքներին: Բուհը խիստ առանջնահերթ է համարում ֆինանսական այլ աղբյուրների հայթաթումը՝ բուհի կայունության ապահովման նպատակով, սակայն այդ ուղղությամբ կատարվող քայլերը նախորդում են պլան-ժամանակացույցում հիմնադրամ դառնալու քայլին, մինչդեռ պետք է լիներ հակառակը: Սեղմ ժամկետում և մեծամասամբ իրար զուգահեռ, բուհը նպատակ ունի ստեղծել մի շարք շահույթ հետապնդող կենտրոններ (լեզուների լաբորատորիա, սպորտդահլիճ, սոց. կենտրոն, համակարգչային գրագիտության կենտրոն և այլն): Կարծում ենք, որ նշված այս քայլերի համար ժամանակահատվածն իրատեսական չէ, քանի որ դրանք իրար զուգահեռ են ընթանում, ինչը իրապես կարող է դժվարացնել դրանց կազմակերպումն ու իրականացումը, ինչպես նաև ֆինանսական միջոցների հայթայթումն ու բաշխումը: Որոշ ցուցիչներ և վերջնարդյունքներ հստակ չեն (օրինակ՝ էլեկտրոնային գրադարանի ստեղծման ցուցիչը, հեռավար ուսուցման լաբորատորիայիի ստեղծման վերջնարադյունքը): Ֆինանսական ռեսուրսների աղբյուրների բազմազանության գործողության քայլերի իրականացումը կարող է խոցելի լինել՝ իրար զուգահեռ ընթանալու տեսակետից, ինչպես նաև ռեսուրսներում չի հիմնավորվում, որ բուհն ունի բավարար ֆինանսական միջոցներ՝ վերոհիշյալ քայլերի իրականացման համար:

8. Հասարակական պատասխանատվություն: Բուհը նախատեսում է ներքին հաշվետվողականության համակարգում զարգացնել վերլուծական բաղադրիչը, հստակեցնել և զարգացնել հասարակության հետ հետադարձ կապերի մեխանիզմները, ինչպես նաև մշակել և ներդնել հասարակությանը մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ: Չնայած առկա քայլերի հաջորդականությանը, կարծում ենք, որ հասարակայնության հետ արդյունավետ հետադարձ կապի հաստատման քաղաքականության և մեխանիզմների մշակումն ու ներդնումը պետք է նախորդի հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման մեխանիզմների ներդրմանը:

9. Արտաքին կապեր և միջազգայնացում: Բուհը բարելավման պլանում ներկայացրել է միջազգայնացման գործողություններ և քայլեր, որոնք ուղղված են սեփական նախաձեռնությամբ և ներդրումներով իրականացվող միջազգային ծրագրերի ներդրմանը, ներքին շահակիցների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի խթանմանն ու ՀՀ բուհերի և տարբեր գիտական կենտրոնների հետ համագործակցության ակտիվացմանը: Պետք է նշել, որ կան ոչ հստակ ձևակերպված վերջնարդյունքներ (օրինակ՝ քայլ 39.2) և ցուցիչներ (քայլ 40.2): Կա նաև գործողության և դրա համար նախատեսված քայլի փոխտեղակալման անհրաժեշտություն:

10. Որակի ներքին ապահովման համակարգ: ԲՈՒՀ-ը ուսումնասիրելով չափանիշի շրջանակներում փորձագիտական խմբի կատարված դիտարկումները և հիմնվելով փորձագիտական խմբի կողմից արված խորհրդատվությունների վրա, կարևորել է ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների մասնակցությունը խրախուսող քաղաքականության, ընթացակարգերի, մեխանիզմների մշակումը, ինչպես նաև ՈԱ համակարգի գործունեության մշտադիտարկման և վերլուծության իրականացումը: ՈԱ գործընթացներում լայնորեն կիրառելով բուհում իրականացվող

հարցումների և տվյալների հավաքագրման գործընթացը՝ ԲՈՒՀ-ը պատրաստակամ է բարձրացնելու դրանց հավաստիությունը՝ մշակելով համապատասխան մեխանիզմներ: Մշակված քայլերի իրականացման համար որպես ռեսուրս ներառված չեն մասնագիտական ամբիոնները, որոնք կրթության որակի հիմնական պատասխանատուներն են: Փորձագիտական խումբը գտնում է, որ ամբիոնների և այլ շահառուների ներառումը այս գործընթացներում էապես կբարձրացնի քայլերի իրականացման արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ թերությունների վերացման ներկայացված պլանի հիմնական մասի իրականացումը իրատեսական է և հիմնականում ռիսկեր չի պարունակում: Պլանավորված գործողությունների և քայլերի կատարումը բարելավման հիմքեր կստեղծի բուհի համար: Սակայն բուհի համար ծրագրի վերահսկելիությունը ապահովելու համար անհրաժեշտ է վերանայել որոշ վերջնարդյունքներ և առանձին գործողությունների համար սահմանել ազդեցության գնահատման ցուցիչներ:

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ ԳՊՄԻ-ի ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի իրականացման վրա.

1) առաջնահերթ լուծում տալ **Մասնագիտության կրթական ծրագրեր, Կառավարում և վարչարարություն, Հետազոտություն և զարգացում** ոլորտներում առկա խնդիրներին,
2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
3) վերանայել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը՝ հաշվի առնելով սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

ՈԱԱԿ փորձագիտության բաժնի ղեկավար

ՈԱԱԿ նախագահող

Հավելված 1

Փորձագիտական խմբի կազմը.

ԳՊՄԻ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Վարդան Սարգսյան**՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Տնտեսական Ինֆորմատիկայի և Տեղեկատվական Համակարգերի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:
2. **Պատրիկ Դեյվիդ Գրեյ**՝ Լոնդոնի Մետրոպոլիտան համալսարան, Հասարակական և հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հասարակական մասնագիտությունների ամբիոնի վարիչ,
3. **Գարեգին Համբարձումյան**՝ Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Ֆիզիոլոգիայի ամբիոն, դոցենտ, ան. գ. թ.,
4. **Մարգարիտա Շահվերդյան**՝ Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, Հոգեբանական գիտությունների թեկնածու,
5. **Գոհար Միքայելյան**՝ Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան, ուսանողուհի:

ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմ.

- **Վարդուհի Գյուլազյան** - ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ավագ մասնագետ, ԳՊՄԻ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի համակարգող,
- **Զարուհի Սողոմոնյան** – Հայաստանում ֆրանսիական համալսարանի Օտար լեզուների ամբիոնի վարիչ, թարգմանիչ:

Հավելված 2

ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ[3]

Փորձագիտական խումբն իր գնահատումը ըստ հավատարմագրման չափանիշների ներկայացրել է հետևյալ աղյուսակով.

ՉԱՓԱՆԻՇ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1. Առաքելություն և նպատակներ	ԲԱՎԱՐԱՐ Է
2. Կառավարում ու վարչարարություն	ԱՆԲԱՎԱՐԱՐ Է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	ԱՆԲԱՎԱՐԱՐ Է
4. Ուսանողներ	ԲԱՎԱՐԱՐ Է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	ԲԱՎԱՐԱՐ Է
6. Հետազոտություն և զարգացում	ԱՆԲԱՎԱՐԱՐ Է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	ԲԱՎԱՐԱՐ Է
8. Հասարակական պատասխանատվություն	ԲԱՎԱՐԱՐ Է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	ԲԱՎԱՐԱՐ Է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	ԲԱՎԱՐԱՐ Է

[3] Գնահատումը կատարելիս փորձագիտական խումբը հետևել է «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգին» և Փորձաքննության անցկացման ձեռնարկում նկարագրված ընթացակարգին՝ իրականացնելով նախ չափորոշիչների, ապա նաև չափանիշների գնահատում: Կիրառվել է **«անբավարար» և «բավարար»** սանդղակը:

Փորձագիտական խումբը գնահատելիս օգտվել է հետևյալ սկզբունքներից.

- անբավարար է, եթե չափանիշի պահանջներին չի համապատասխանում, նման ձևով շարունակելն անթույլատրելի է, և հրատապ բարելավումների անհրաժեշտություն կա,
- բավարար է, եթե համապատասխանում է չափանիշի պահանջներին, չնայած որ կարող է լինել բարելավման անհրաժեշտություն: